ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

Հաշվետվություն

Հարգելի պարոն Մամիկոնյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2023 թվականի հուլիսի 20-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- ✓ ուսումնասիրել եմ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 23-ից 2021 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքի՝ սահմանային պետական վերահսկողությանն առնչվող դրույթները
- ✓ Իրականացրել եմ Տեսչական մարմնի կողմից իրականացված պետական վերահսկողության շրջանակներում, «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ և 16-րդ հոդվածների համաձայն, նախորդող տարիների ընթացքում ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման՝ ու հաշվառման, ինչպես նաև լաբորատոր փորձաքննությունների համար վճարների մասով գոյացած պարտավորությունների հիմքերի ճշգրտման աշխատանքներ:
- ✓ Հետևողական աշխատանք եմ իրականացրել նախորդ տարիներին կուտակված պարտքերի հավաքագրման ուղղությամբ:
- ✓ Ուսումնասիրել եմ ներմուծվող սննդամթերքի փորձաքննություն կատարած կազմակերպությունների հետ կնքված փորձաքննության ծառայությունների մատուցման շրջանակային համաձայնագրերը՝ «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի ապրիլ ամսից մինչև տարեվերջ դուրս գրված հարկային հաշիվները և հանձնման-ընդունման արձանագրությունները, որում բացահայտվել են թվով 2՝ «Լևոմիցետին» և «Տետրացիկլինի խումբ» ցուցանիշների մասով անհամապատասխանություններ: «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի 2018 թվականից 2020 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում գործող շրջանակային համաձայնագրում բացահայտվել են «Ռակտոպամին» և «Կալիումի ֆերոցիանիդ» ցուցանիշների մասով անհամապատասխանություններ:
- ✓ Ուսումնասիրել եմ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ լիազոր մարմնի կողմից անասնաբուժության ոլորտում անասնաբուժական

դեղամիջոցների արտադրության, պահպանման, տեղափոխման, իրացման և վերամշակման ընթացքում, ՀՀ պետական սահմանի անցման կետերում երկրի տարածք ներմուծվող և երկրից արտահանվող անասնաբուժական միջոցների և անասնաբուժական դեղամիջոցների, կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող նյութերի ու առարկաների անվտանգության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացրել եմ զեկուցագիր՝ անասնաբուժության մեջ կիրառվող դեղագործական արտադրանքի մասով թույլատվական փաստաթղթերի կիրառման՝ ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումների համապատասխանության մասին:

✓ Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացրել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՖԱՐՅԱՆ

20.10.2023թ.